ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի, 2012 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ ընդունի զՈրդին, ընդունի եւ զկեանսն.
եւ որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ, եւ ոչ զկեանսն ընդունի»
(Ա. Յովհ. Է. 12):

Սիրելի հաւատաւոր ժողովուրդ ի Հայրենիս եւ ի Սփիւռս.

Այսօր մեր հոգիներում եւ մտահայեացքի առջեւ աշխարհակեցոյց «մեծ եւ սքանչելի» այն խորհուրդն է, որ ճառագեց երկնքում եւ երկրի վրայ, երբ պայծառ ասպղը կանգնեց բեթղեհէմեան քարայրից վեր, եւ հրեշտակները աւետեցին Փրկիչ Աստուածորդու Սուրբ Ծնունդը՝ ասելով. «Այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է» (Ղուկ. Բ. 11): Աւետարանները պատմում են, թէ ինչպէս հեռաւոր երկրներից եկած իմաստուն մոգեր եւ մերձակայքում գտնուող հովիւներ փութացին դէպի քարայրը եւ երկրպագելով խանձարուրով փաթաթուած նորածին Մանուկին՝ ողջունեցին Փրկչի գալուստը աշխարհ:

Սքանչելախորհուրդ Սուրբ Ծննդեան տօնին ամենքս ուխտաւոր ենք Բեթղեհէմի՝ այցելելով Սուրբ Երկիր կամ մեր հոգին դարձնելով Բեթղեհէմ՝ մեզ շնորհուած հաւատքի իմաստութեամբ ու զօրութեամբ երկրպագելու Մանուկ Յիսուսին, Նրան ճանաչելու եւ ընդունելու իբրեւ Աստուծոյ Միածին Որդին եւ ճանապարհը յաւիտենական կեանքի, ինչպէս գրում է առաքեալը. «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաեւ կեանքը, եւ ով չի ընդունում Աստուծոյ Որդուն, չի ընդունում նաեւ կեանքը»: Այսօր «Հայոց Բեթղեհէմ» միածնաէջ այս սուրբ տաճարում եւ նրա լոյսով հաստատուած մեր բոլոր եկեղեցիներում մենք, սիրելիներ, եւ ազգիս զաւակունք ցնծութեամբ օրհնաբանում ենք ծնունդը մեզ համար աշխարհ եկած Փրկչի եւ խոստովանում. «Դու ես մեր Տէրը: Դու ես մեր Փրկիչը: Դու ես աղբիւրը մեր կեանքի եւ ճանապարհը յաւիտենութեան»: Այս խոստովանութիւնը լուսաւորել եւ լուսաւորում է մարդկութեան ուղին: Քրիստոսով Աստուծոյ սէրը յայտնուեց մարդկանց, Աստուածորդին աշխարհ եկաւ վերացնելու մեղքը, փարատելու մահուան խաւարը եւ մարդկութեանն առաջնորդելու դէպի իր Արարիչը՝ ընդունելու համար յաւիտենական կեանքը: Քրիստոսով աստուածային սէրը տարածուում է ողջ աշխարհի՝ մարդու եւ բնութեան վրայ, միշտ բարենորոգելու այն եւ կեանքով ու խնդութեամբ լցնելու: Սակայն աստուածային կամքին հակառակ ընթացքը կեանքը դարձնում է հիմնախնդիրների ու մարտահրաւէրների կիզակէտ: Նայենք արդի աշխարհին. այն ծանրաբեռնուած է բազում նեղութիւններով, զրկանքներով, հակա-

սութիւններով ու բախումներով: Քրիստոսին եւ Նրա պատուիրանների մերժումը ծնում է պատերազմներ ու աղէտներ, վնասում Երկիր մոլորակը, պատճառ դառնում հոգու եւ հոգեւորի տկարացման, նաեւ՝ աստուածաշնորհ կեանքի բռնի ընդհատման, սպանութիւնների, ինքնասպանութեան: Մեր օրերի համընդհանուր ճգնաժամը, որ բացատրուում է քաղաքական, տնտեսական, նիւթական պատճառներով, հիմնականում նոյնպէս օտարացման եւ հեռացման հետեւանք է դէպի Աստուած տանող լուսաւոր ուղուց, մեղսաւոր ընթացքով երկնային սիրոյ պարգեւներից հրաժարման: Քրիստոս է կեանքը, Նրա պատուիրանները պահելով Աստուծոյ սէրը, ճշմարտութիւնը, սրբութիւնը, արդարութիւնն ու ողորմութիւնն են իրագործում աշխարհում, առաջնորդելով այն դէպի բարին ու կատարեալը, դէպի լիակատար կեանք, ինչպէս մեր Տիրոջ երկրային կեանքն էր, որը հաւատ ու սէր էր Երկնային Հօր հանդէպ եւ օրինութիւն՝ մարդկանց համար:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հաւատքն ու սէրը այն անսասան հիմքն են, որի վրայ հաստատուն մնալով պիտի զօրանայ նաեւ մեր երկրի ու ժողովրդի կեանքը, լցուի խնդութեամբ ու բերկրանքով: Հաւատքի եւ սիրոյ արգասիքները ազնուութեան, արդարութեան, կարեկցութեան, միմեանց սատարումի եւ զօրակցութեան բարի գործերն են, որ միշտ ուղեկից են լինելու մեզ, եթէ մեր ուղին չխոտորուի Քրիստոսի լուսաւոր ճանապարհից: Մեր օրերում, նաեւ մեր կեանքում հաւատաշէն գործերի, աստուածահաճոյ բազում ձեռնարկների կողքին ցաւով կարելի է տեսնել աստուածամերժ ընթացքներ, մեր ժողովրդի քրիստոնէական նկարագրին անյարիր բարքեր, ազգային նուիրական արժէհամակարգի խաթարում, նաեւ՝ հոգեւորի անտեսումով նիւթականի, դրամի գերարժեւորում, որը դառնում է գլխաւոր նպատակ՝ փոխանակ լինելու կեանքի արդար ու բարի ընթացքը կազմակերպելու միջոց: Նման դրսեւորումները, հաստատապէս, պարպում են կեանքը Քրիստոսի կենարար ներկայութիւնից, զրկում այն հոգեւոր ուրախութիւնից, գթասրտութիւնից, մարդասիրութիւնից, ազնիւ ու վեհ զգացմունքներից, տէրունաշնորհ փրկութիւնից: Քրիստոս զգուշացնում է մեզ այդ կործանարար ճանապարհից՝ ասելով. «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մարկ. Ը. 36):

Սիրելիներ, մեր Տիրոջ ցոյց տուած ճշմարիտ սիրոյ օրինակով նորոգենք այսօր մեր կեանքը, որը տակաւին զերծ չէ կարիքներից ու դժուարութիւններից, մեր երկրի եւ ժողովրդի առաջընթացն ու բարօրութիւնը կասեցնող արտաքին եւ ներքին հիմնահարցերից: Ներկայ կեանքի խնդիրներն ու հրամայականները չեն կարող սասանել մեր կամքը՝ յաղթահարելու խոչընդոտներն ու արգելքները եւ միմեանց աջակից՝ ծառայելու մեր երկրի զօրացմանը, ազգային վերելքին եւ լուսաւոր գալիքի կառուցմանը: Մեր կեանքի առաջընթացը լուսառատ նոր հորիզոններ է պարգեւում, եթէ համազգային ջանքերի մէկտեղումով յանձնառու զտնուենք գործելու հասարակութեանը բարիք բերելու, Հայրենիքին, ազգին ծառայելու ձգտումով՝ զուգակցելով օրինապահութիւնը սիրոյ, արդարադատութիւնը՝ գթասրտութեան, հարստութիւնը՝ ողորմութեան, ուժը՝ աջակցութեան, կարողութիւնը՝ սպասաւորութեան հետ, քանզի ընդունում եւ դաւանում ենք կեանք պարգեւող Որդուն: Այսօր մոգերի ու հովիւների օրինակով խոնարհուենք Քրիստոսի առջեւ, ընդունենք Տիրոջը մեր սրտերի մսուրներում, նորոգուենք մեզ պարգեւուած փրկութեան շնորհով եւ միշտ յիշենք, որ Տիրոջ «ողորմութիւնը սերնդից սերունդ Իր երկիւղածների վրայ է» (Ղուկ. Ա. 50):

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան հոգեւորոգ տօնի առիթով Քրիստոսաւանդ սիրով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, սրբազան պապարազի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին՝ մեծազնիւ տիկնոջ հետ եւ հայոց պետական աւագանուն: Ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակօ Սահակեանին: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սէրն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփիւռս աշխարհի համայն մեր ժողովրդին: Սուրբ Ծննդեան աւետիսով ողջունում ենք Քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին:

Աւետարեր ու շնորհառատ այս օրը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, աղօթենք եւ հայցենք մեր Փրկչին ասելով. «Տէր, թող Քո Սուրբ Ծննդեան շնորհները լուսաւորեն աշխարհը համայն, խաղաղութեան հրեշտակաձայն աւետիսը հնչի Երկրի բոլոր ծագերում, հաճութիւնն ու համերաշխութիւնը ուղեկից լինեն ազգերին ու ժողովուրդներին, եւ երջանկութիւնն ու խնդութիւնը թագաւորեն բոլոր ընտանիքներում: Թող Քո Սուրբ Ծննդեան լոյսի առջեւ նահանջեն ատելութիւն եւ հակառակութիւն, յուսաբեկութիւն, անտարբերութիւն, դառնութիւն եւ տխրութիւն, եւ համայն աշխարհը պարուրուի Քո պարգեւած սիրով ու յոյսով: Քո խնամքի մէջ սիրով, միաբան պահպանիր, Տէր, աշխարհասփիւռ ազգիս հայոց եւ պարգեւիր բարօր ու շէն կեանք, բարգաւաճում եւ հզօրութիւն՝ Հայաստան եւ Արցախ մեր երկրին, առաւել լոյս ու պայծառութիւն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, եւ մենք՝ Քո խօսքին հաւատարիմ, գործերով վկայենք մեր հաւատքը՝ մեր սրտերում միշտ զգալով ուրախութիւնը կենսապարգեւ Քո ներկայութեան եւ ցնծութեամբ աւետելով բարի լուրը Քո Սուրբ Ծննդեան՝

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Զեզ եւ մեզ մեծ աւետիս: